«ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ԾՐԱԳԻՐ

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

| | |
|---|---|
| ԹԵՄԱ | ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ (ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ) ՀԵՏ՝ ՍԱՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ և ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ |
| ԴԱՍՏԻԱՐԱԿ | ՀԱՍՄԻԿ ՉՈԲԱՆՅԱՆ |
| ՂԵԿԱՎԱՐ | ԱԻԴԱ ԽԱԼԱԹՅԱՆ |
| ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ | «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ |

2023թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ (ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ) ՀԵՏ՝ ՍԱՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ և ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ……3

Ներածություն……3

Ընտանիքի դերը նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման գործում……6

Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության էությունը և կառուցվածքը…..10

Ընտանիք-մանկապարտեզ համագործակցությունը «Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում……11

Մանկապարտեզ-ընտանիք համագործակցության ձևերը……12

Ծնողների հետ դասախոսություններ, սեմինարներ……14

Եզրակացություն……16

Օգտագործված գրականության ցանկ……18

*Ընտանիքը դաստիարակում է՝ ինչպես կարող է:*
*Մենք՝ մանկավարժներս, պետք է ուղղորդենք այդ գործընթացը:*
*Մակարենկո*

# ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ (ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ) ՀԵՏ՝ ՍԱՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ և ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ

## *Ներածություն*

Նախադպրոցական հաստատությունները (մանկապարտեզ, նախակրթարան, երեխայի խնամքի ու զարգացման կենտրոններ և այլն) կոչված են օգնելու ընտանիքին երեխայի վաղ զարգացման ու դաստիարակության հարցերում: Երեխաների դաստիարակության զարգացման ապագայի ձևավորման մեջ անփոխարինելի է ընտանիքի դերը: Երեխաների դաստիարակությամբ զբաղվելը կարևոր և հաճելի երևույթ է, բայց շատ պատասխանատու: Երեխաների կատարած գործողությունների համար ամենապատասխանատուն համարվում է ընտանիքը: Դաստիարակության գործում մեծ է նաև մանկապարտեզի դերը, որտեղ երեխան ստանում է իրեն հուզող և հետաքրքրող հարցերի պատասխանները: Իմ կարծիքով երեխայի դաստիարակությունը ավելի հեշտ և լավ կնթանա, եթե լինի ըմտանիք-մանկապարտեզ արդյունավետ համագործակցությունը: Կա այսպիսի մի արտահայտություն, որ երեխան ընտանիքի հայելին է և նրա կատարած յուրաքանչյուր արարքը կամա թե ակամա արտացոլում է ընտանիքի դեմքը: Ընտանիքն է համարվում երեխայի դաստիարակության առաջին օղակը: Երկրորդ օղակը մանկապարտեզն է , որն էլ համարվում է երեխայի դաստիարակության պատասխանատուն: Դաստիարակի խնդիրն է ոչ միայն այսօրվա չափորոշիչներին համապատասխան գիտելիքների փոխանցումը երեխային, այլ նաև երեխայի մեջ

ձևավորել անհատական որակներ, որպեսզի երեխան տեսնի գեղեցիկը, հասկանա բարին և գնահատի այդ ամենը։

Նախադպրոցական հաստատությունները չեն փոխարինում ընտանեկան դաստիարակությանը, այլ լրացնում ու համակարգում են այն՝ համագործակցելով երեխաների ծնողների ու ընտանիքների հետ։ Ընտանիք-մանկապարտեզ համագործակցությունը շարունակում է ընտանիքի աշխատանքը, օգնում ընտանիքին։ Ուստի երեխայի անհատականության ձևավորման, ներդաշնակ զարգացման համար կարևոր է այդ երկու կարևոր օղակների արդյունավետ համագործակցությունը։ Երեխայի համար մանկապարտեզ հաճախելը պետք է լինի ուրախ և հաճելի կենսակերպ։ Սակայն լինում են դեպքեր, երբ ծնողը իր տրամադրությունը և լարվածությունը փոխանցում է երեխային. մտածում է արդյո՞ք լավ վերաբերմունք կցուցաբերեն իմ երեխայի նկատմամբ, չե՞ն նեղացնի, տեսնես եթե ինքնուրույն չուտի կօգնե՞ն երեխայիս և այլն։ Այս խնդրից խուսափելու համար պետք է ծնողին զինել մանկավարժական գիտելիքներով, կազմակերպել սեմինարներ, որտեղ կքննարկվեն իրենց հուզող բոլոր հարցերը։ Կարևոր է, որ ծնողները վստահեն դաստիարակին, նրա մանկավարժական հմտություններին գնահատեն նրա անձնային որակները։ Եվ վերջապես ծնողները հասկանան, որ իրենց երեխաները պաշտպանված և հուսալի ձեռքերում են մանկապարտեզում։

***Հետազոտության արդիականությունը.***

Ընտանիքը հասարակության՝ ամուսնությամբ կամ ազգակցական կապերով կապված, համատեղ ապրող միմյանց համար բարոյական պատասխանատվություն կրող անդամների կողմից ձևավորված սկզբնական կառույց է։

Ներկայումս ընտանեկան դաստիարակության համակարգը որոշակի փոփոխություններ է կրում սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային տեղաշարժերի հետևանքով փոխվում է ավանդական ընտանիքի նկարագիրը ։

Այս տեսանկյունից մանկապարտեզների մանկավարժական կազմը իրենց առաքելությունը պետք է տեսնեն ոչ միայն գիտելիքներ տալու, այլև բարոյական, արժեքներ կրող մարդասիրական հատկանիշներով օժտված ազգային քաղաքացիների դաստիարակման մեջ։ Այդ առաքելությունը կարելի է իրագործել

միայն դաստիարակների և նրանց ընտանիքների հետ սերտ համագործակցության պայմաններում:

Դաստիարակների, ծնողների և երեխաների փոխգործակցությունը կարող է արդյունավետ լինել, եթե նշված սյուբեկտներն ստանձնեն փոխհամաձայնեցված աշխատանքի պատասխանատվություն, գործեն միասին, համատեղ ջանքերով պլանավորեն գործունեությունը և իրականացնեն արդյունքների համատեղ գնահատում: Միաժամանակ մանկապարտեզային կառույցների խնդիրն է զարգացնել ծնողների և երեխաների համագործակցության ու հաղորդակցման կարողությունները:

Հիմնախնդրի վերաբերյալ գիտական գրականության վերլուծությունը թույլ է տվեց բացահայտել հետազոտվող հիմնախնդրի տարբեր տեսանկյունների մշակվածության աստիճանը:

Ընտանիքը եղել և տեսանելի ապագայում էլ կլինի աճող սերնդի դաստիարակության հիմքը: Ծնողների հետ շփման ժամանակի սղությունը, փոխգործակցության սահմանափակումը, ընտանեկան դաստիարակության ավտորիտար ոճը ընտանիքում բարոյահոգեբանական և հուզական հարաբերությունների քայքայման պատճառ են դառնում, մինչդեռ դրանք ընտանեկան դաստիարակության արդյունավետության հիմնական այն պայմաններն են, որոնք անհրաժեշտ են երեխայի բնականոն զարգացման համար , և որոնց բացակայությունը կարող է հանգեցնել ներընտանեկան հարաբերությունների ճգնաժամի :

***Հետազոտության նպատակը.***

Բացահայտել և հիմնավորել առանձնահատկությունները, համագործակցության ձևերն ու մեթոդները:

***Հետազոտության խնդիրները.***

- Ներկայացնել ընտանիքի և մանկապարտեզի դերը և նշանակությունը երեխայի ներդաշնակ զարգացման գործում:
- Ուսումնասիրել ընտանիք-մանկապարտեզ համագործակցության ձևերն ու մեթոդները:

*Ընտանիքի դերը նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման գործում*

Այսօրվա դրությամբ հաճախակի է բարձրացվում նախադպրոցականների դաստիարակության գործում ընտանիքի և մանկապարտեզի դերի ու գործառույթների հարցը: Այս տարիքի երեխաների դաստիարակության խնդիրները, առանձնահատկությունները հատուկ կարևորություն են ձեռք բերում և ուշադրություն են պահանջում: Ուսուցման դժվարությունները, դաստիարակության ձախողման պատճառները մեզ ստիպում են մտածել, որ երեխայի դաստիարակության մեջ որոշիչ դերը տրվում է ոչ միայն մանկապարտեզին (դաստիարակներին, - հոգեբաններին, սոցիալական մանկավարժներին), այլև, իհարկե, պատկանում է ընտանիքին, որը դառնում է կրթության համակարգողը և կարգավորողը: Ավանդաբար դաստիարակության հիմնական ինստիտուտը ընտանիքն է: Այն, ինչը երեխան մանկության տարիներին ձեռք է բերում ընտանիքում, նա պահպանում է իր հետագա ողջ կյանքի ընթացքում:

Ընտանիքի՝ որպես դաստիարակության ինստիտուտի կարևորությունը պայմանավորված է նրանով, որ երեխան այնտեղ գտնվում է իր կյանքի զգալի մասում, և անձի վրա իր ազդեցության տևողությամբ կրթության ինստիտուտներից ոչ մեկը չի կարող համեմատվել ընտանիքի հետ: Ընտանիքում երեխայի բարեկեցության, ճիշտ դաստիարակության, երջանիկ մանկության գլխավոր պայմանը նրա հանդեպ ծնողների սերն է: Ընտանիքում երեխաների դաստիարակության կարևոր պայմանը ծնողների հեղինակությունն է:

Ընտանիքում են դրվում երեխայի բարոյական, գեղագիտական դաստիարակման հիմքերը: Երեխայի համար ընտանիքը պատրաստի օրինակ է սեփական կյանքը կառուցելու համար: Յուրաքանչյուր երեխա իր ընտաիքի հայելին է և ծնողներն են պատասխանատու նրա հետագա ողջ կյանքի համար: Երեխան ամենից առաջ իր ընտանիքում է տեսնում բարության, ուշադրության, քնքշանքի, թույլերի նկատմամբ խղճահարության ու օգնելու հիմքերը:

Երեխան յուրացնում է ընտանեկան ավանդույթներն ու սովորույթները՝ նախապատրաստվում է հետագա աշխատանքային գործունեությանը: Ընտանիքում են դաստիարակվում երեխայի ինքնասպասարկումը, ինքնակազմակերպումը, պատասխանատվությունը, հոգատարությունը: Ընտանեկան դաստիարակությունը կարող է նպաստել երեխայի մոտ ձեռներեցության, տնտեսվարության, հաշվենկատության, անկախության և երեխայի արագ աճին:

Նախադպրոցականների դաստիարակության կարևոր պայմաններն են մանկապարտեզ-ընտանիք-երեխա փոխհարաբերությունները: Երբեմն ծնողները կարծում են, որ երեխայի մանկապարտեզ գնալով ընտանիքի դերը նրա դաստիարակության մեջ նվազում է, քանի որ երեխաները իրենց ժամանակի մեծ մասն անց են կացնում մանկապարտեզի պատերի ներսում: Սակայն հենց այդ ժամանակ է, որ ընտանիքի ազդեցությունը ոչ միայն չի նվազում, այլև աճում է:

Ընտանիքի և մանկապարտեզի միասնական, համակարգված պահանջները, ընտանիքում երեխաների ճիշտ դաստիարակության պայմաններից են: Այնտեղ, որտեղ դաստիարակը և ծնողը գործում են համաձայնեցված, ավելի լավ է իրականացնել կրթադաստիարակչական աշխատանքներ:

Հայտնի մանկավարժ Սլաստենինը անդրադառնալով այս թեմային գրում է. «ընտանիքի և մանկապարտեզի դաստիարակությունը սերտորեն փոխկապակցված են և լրացնում են միմյանց, սակայն չեն համընկնում: Հետևաբար, բաղադրիչներից մեկի բացակայությունը միշտ լի է լուրջ կորուստներով՝ ինչպես կրթության օբյեկտի, այնպես էլ հենց ուսումնական գործունեության սուբյեկտների՝ ընտանիքի և մանկապարտեզի համար:» [4, 26-27]

Ծնողների բարձր պահանջկոտությունը իրենց և երեխաների նկատմամբ, ընտանիքի ավագ և կրտսեր անդամների փոխադարձ հարգանքը, բարեկամության, վստահության և փոխըմբռնման մթնոլորտը դպրոցում, ընտանիքում և արտադպրոցական մանկական կոլեկտիվներում դաստիարակության միասնական պահանջների սահմանման կարևորագույն պայմաններն են:

Սլաստենինիը անդրադառնալով այս թեմային նշում է. «այսօր զգալիորեն ընդլայնվել են ընտանիքի հնարավորությունները երեխաների դաստիարակության գործում: Բոլոր ծնողները ոչ միայն գրագետ են, այլև ունեն առնվազն թերի

միջնակարգ կրթություն, ինչը նրանց համար բարենպաստ պայմաններ է ստեղծում մանկական և հոգեբանական գիտելիքների որոշակի համակարգին տիրապետելու համար»:[4, 27-29]

Ծնողների մեծ մասը երեխաների դաստիարակության հարցում մանկապարտեզի, այնուհետև նաև դպրոցի իսկական դաշնակիցներն են, որոնք ակտիվորեն օգնում են ողջ գործունեությանը, լսում դաստիարակների և ուսուցիչների խորհուրդները: Սակայն կան նաև ծնողներ, որոնք անհրաժեշտ ուշադրություն չեն դարձնում իրենց երեխաներին, և երբեմն իրենց պահվածքը վատ է անդրադառնում երեխաների վրա: Կրթության բազմաթիվ թերությունները բացատրվում են ծնողների մանկավարժական անգրագիտությամբ:

Ժուկովը անդրադառնալով այս թեմային գրում է համախմբված ընտանեկան կոլեկտիվում դաստիարակված երեխաները գործնականում ճանաչում են ընկերության և բարեկամության զգացումները: Խմբում գտնվելու առաջին իսկ օրերից նման երեխաները հեշտությամբ մտնում են կոլեկտիվ, ձգտում են ընդհանուր հետաքրքրություններ գտնել իրենց հասակակիցների հետ, ընկերություն անել, օգնել նրանց ուսման մեջ : » [3, 30]

Միևնույն ժամանակ, կան նաև երեխաներ, որոնք չեն կարողանում կոլեկտիվում շփվել, կոպիտ են մյուսների հետ, դրսևորում են արհամարհական պահվածք: Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, նման երեխաները հաճախ լինում են այն ընտանիքներից, որտեղ թույլ են տալիս կոպտություն, կեղծավորություն, ստախոսություն, բարոյական նորմերի և վարքագծի կանոնների խեղաթյուրված մեկնաբանություն: Ծնողների հետ նպատակաուղղված աշխատանքի բացակայության դեպքում չի բացառվում դժվար կրթվող երեխաների դասի ավելացման հնարավորությունը:

Գիտելիքի որակի, ստեղծագործական ունակությունների, երեխաների դաստիարակության արդյունավետության բարձրացումը մեծապես կախված է դաստիարակների աշխատառճից, գործողությունները մեթոդաբար ճիշտ պլանավորելու և անցկացնելու նրանց կարողությունից: Դաստիարակը պետք է իմանա յուրաքանչյուր սաների կարողությունները:

Նախադպրոցականների զարգացումը, նրաց անձնական որակների ձևավորումը որոշվում է ընտանիքում կրթության մակարդակով, այսինքն՝ ընտանիքը կրտսեր դպրոցական տարիքի երեխայի կրթության կարևորագույն գործոնն է:

Ինչպե՞ս ծնողներին ներգրավել համատեղ ուսումնական գործընթացում: Հենց սկզբից անհրաժեշտ է հարաբերություններ կառուցել դաստիարակների և երեխաների ծնողների միջև: Շատ դաստիարակներ իրենց աշխատանքում օգտագործում են երեխաների ծնողների հետ փոխազդեցության տարբեր ձևեր:

Նման հարաբերությունների հիմքը պետք է լինի փոխվստահելի շփումները: Դաստիարակը պետք է ուսումնասիրի յուրաքանչյուր ընտանիք, պարզի ընտանեկան ավանդույթների և տոների դերը, հոգևոր հետաքրքրությունները: Արդյունքը հաճախ կախված է նրանից, թե ինչպես է դաստիարակի խոսքը ուղղված ընտանիքին, ինչ տոնով է այն ասվում: Ժամանակին և ճիշտ գտնված բառը, ծնողներին օգնելու ցանկությունը հավատալ իրենց ուժերին, աջակցել դժվար պահերին, գործնական խորհուրդ տալ երբեմն ավելի են սերտացնում դաստիարակին ընտանիքի հետ և ամրապնդում նրա հեղինակությունը :

Ընտանիքն ու մանկապարտեզը երեխայի համար ռեսուրսների անփոխարինելի աղբյուր են, էներգիայի, որում նա ապրում է: Գեղեցիկ երեխաները մեծանում են այն ընտանիքներում, որտեղ մայրն ու հայրը իսկապես սիրում են միմյանց և միևնույն ժամանակ սիրում և հարգում են շրջապատող մարդկանց: Ցավոք, չի կարելի երեխային բարոյական դաստիարակել ՝ միայն բացատրելով, թե ինչն է լավ, իսկ ինչը վատ. նա կարող է իմանալ, որ պետք է բարի, կարեկցող լինել, բայց անտարբեր մնալ ուրիշի դժբախտության հանդեպ, իմանալ, որ ստելն անթույլատրելի է, բայց սուտ խոսել:

## *Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության էությունը և կառուցվածքը*

Ընտանիք-մանկապարտեզ գործընկերությունը համագործակցային հարաբերություններ և գործողություններ են, որոնք ներառում են մանկապարտեզի անձնակազմը, ծնողներին, երեխաներին և ընտանիքի այլ անդամներին: Արդյունավետ գործընկերությունները հիմնված են փոխադարձ վստահության և հարգանքի վրա: Ընտանիքներն իրենց երեխաների առաջին դաստիարակներն են, և նրանք շարունակում են ազդել իրենց երեխաների ուսման և զարգացման վրա նախադպրոցական տարիներին և դրանից հետո: Մանկապարտեզները կարևոր պատասխանատվություն ունեն օգնելու դաստիարակել և ուսուցանել ապագա սերունդներին, իսկ ընտանիքները վստահում են մանկապարտեզներին՝ իրենց երեխաների ապագայի կրթական հիմքեր ապահովելու համար:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ արդյունավետ մանկապարտեզներն ունեն ծնողների ներգրավվածության բարձր մակարդակ: Այս ներգրավվածությունը խիստ կապված է երեխաների վարքագծի բարելավման հետ: Ընտանիքի ներգրավվածությունը կարող է մեծ ազդեցություն ունենալ երեխաների վարքային զարգացման վրա՝ անկախ ընտանիքի սոցիալական կամ մշակութային ծագումից:

Միշտ չէ, որ հեշտ է ընտանիք-մանկապարտեզ համագործակցություն զարգացնելը: Դա պահանջում է նվիրվածություն և ժամանակ: Ճնշումների և հանգամանքների պատճառով շատ ընտանիքներ հատուկ պայմանավորվածությունների կամ լրացուցիչ աջակցության կարիք կունենան, որպեսզի նրանք կարողանան ակտիվորեն ներգրավվել իրենց երեխաներին նախադպրոցական շրջանի կյանքում և օգնեն ստանալ առավելագույնը մանկապարտեզից:

Ընտանիք-մանկապարտեզ նվիրված գործողությունների թիմը՝ բաղկացած դաստիարակներից, մանկապարտեզի ղեկավարներից և ծնողներից՝ համագործակցության պլաններն ու գործողությունները մշակելու և համակարգելու

համար, կարող է հիմք հանդիսանալ գործընկերությունն ավելի լայնորեն բարելավելու համար:

*Ընտանիք-մանկապարտեզ համագործակցությունը*
*« Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ » ՀՈԱԿ-ում*

<<Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ում գործում է 6 խումբ՝ 2 ավագ, 2 միջին և 2 կրտսեր խումբ: Խմբերից յուրաքանչյուրում ընդգրկված է 30 երեխա:

Երեխաների ծնողների հետ կնքվում է պայմանագիր, և ընտանիք-մանկապարտեզ համագործակցությունը փաստագրվում է հենց սկզբում: Ընտանիք-մանկապարտեզ համագործակցության նախապայմանը ընտանիք-մանկապարտեզ արդյունավետ հաղորդակցության ապահովումն է: Մանկապարտեզն ունի մեծ սրահ, որտեղ տեղադրված է խաղանկյուն՝ սղղարաններով, որն ապահովում է երեխաների ակտիվ հանգստի կազմակերպման արդյունավետ աշխատանքը: Խմբասենյակները, խաղասենյակը, խոհանոցը և ննջասենյակը ընդարձակ են: Մանկապարտեզի բուն գործունեությանը ծնողներին ներգրավելու նպատակով իրականացվում են բազմաթիվ և բազմաբնույթ նախագծեր: Երբեմն մանկապարտեզն ինքն է ծնողների համար կազմակերպում տարբեր սեմինար-պարապմունքներ: Երեխաների արդյունավետ զարգացման համար մեծ է ծնողի դերը: Ծնողը ծանոթ է առաջարկվող ծրագրին, տեղյակ է մանկապարտեզի գործունեության մասին: Համապատասխան սոցիալական հարթակներում ստեղծել ենք ծնողական խմբեր, որում քննարկվում են տարաբնույթ հարցեր: Ծնողների հետ արագ հաղորդակցում ապահովելու համար օգտագործում են ՖԲ հարթակը՝ ստեղծելով մանկապարտեզի խմբի էջ: Որոշ դեպքերում էջը վարում է կոնկրետ պատասխանատուն, կան մանկապարտեզներ, որտեղ էջը վարում են նաև դաստիարակները: Էջում սովորաբար տեղադրվում են տարվա ընթացքում իրականացված միջոցառումների տեսանյութեր, երբեմն՝ օրվա գործունեության մասին լուսանկարներ: Նշենք, որ մանկապարտեզում դաստիարակները միշտ աշխատել են ծնողների հետ, նրանք մասնակցել են միջոցառումներին:

Այսինքն՝ ընտանիքը ոչ թե դեպքից դեպք, այլ մշտապես տեղյակ է մանկապարտեզի ծրագրերին, գործունեությանը, մանկավարժական մոտեցումներին և մեթոդիկային: Ավելին, կարող է մասնակցել, առաջարկներ անել, որոնք անպայման լսվում են, քննարկվում, ընդունվում:

### *Մանկապարտեզ-ընտանիք համագործակցության ձևերը*

Ժամանակակից մանկավարժության մեջ նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակությանը, նրանց սոցիալականացման գործընթացի ուսումնասիրությանը առանձնահատուկ նշանակություն է տրվում:

Ժամանակի ընթացքում փոխվում են հասարակական պահանջները, փոխվում է նաև դաստիարակության կարգախոսը: Ուստի այսօր բավականին բարդ խնդիր է դրված մանկապարտեզների ու ընտանիքների առջև լուծելու այն: Բոլոր ծնողներն ունենում են երազանքներ, իրենց երեխաների ապագայի հետ կապում մեծ հույսեր, սակայն դրանք իրագործելու համար անհրաժեշտ են մեծ ջանքեր, երկարատև ժամանակ, ճիշտ դաստիարակություն և փոխադարձ վստահություն:

Խոսելով ընտանիքի մասին՝ ռուս մանկավարժ Գրիգորևան նշում է.

«ընտանիքը այն միջավայրն է, որտեղ սկսվում է երեխայի դաստիարակությունը, և գիտակցելով այս ամենը՝ դաստիարակը պետք կարողանա ճիշտ համագործակցության շնորհիվ ստեղծել կապ մանկապարտեզի և ընտանիքի միջև, փնտրել նոր ուղիներ, որոնք կնպաստեն և կամրապնդեն նրանց մշտական երկկողմանի շփմանը: Հետևաբար, ծնողները և ընտանիքի անդամները երեխայի կյանքում դառնում են ամենակարևոր և ազդեցիկ մարդիկ: Երեխայի ծնվելու պահից սկսած՝ նրանք պետք է գիտակցեն, մասնակցեն և նպաստեն իրենց իսկ երեխայի դաստիարակության, կթության և զարգացման գործընթացին: Ընտանիքն է ապահովում երեխայի մշակութային հիմքի և արժեքային համակագի ձևավորմանը, որտեղ էլ սկիզբ է առնում երեխայի սոցիալականացման գործընթացը»: [2, 55]

Մանկապարտեզ-ընտանիք համագործակցության համակարգում այսօր հիմնականում կիրառվում են ծնողական ժողովները և ծնողների հետ անհատական

խորհրդատվությունը: Ժողովը ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են մի շարք հիմնախնդիրները:

Փաստորեն, այսօր մանկապարտեզ-ընտանիք կապն առավել արդյունավետ դարձնելու համար արդիական մանկապարտեզի «բաց» մոդելը, որը դաստիարակներին հետաքրքրող մի շարք հացերի պատասխաններ կտա, մասնավորապես՝ ինչպե՞ս կարելի է ներգրավվել ծնողներին կամ ինչպե՞ս ներազդել մանկապարտեզ-ընտանիք փոխարաբերության համակարգի վրա:

Ծնողները և դաստիարակները նույն երեխաների դաստիարակներն են: Հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի միայն նրանց համագործակցության պայմաններում: Դաստիարակները և ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության՝ երեխայի կյանքը լիարժեք չէ: Մանկապարտեզը երեխային տալիս է իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքում ձևավորվում և մշակվում են մարդկանց կարեկցելու կարողությունը: Անձի ներդաշնակ զարգացման համար այդ երկու որակներն էլ խիստ անհրաժեշտ են: Ընտանքի և մանկապարտեզի լավ, բարեկամական հարաբերություններից շահում են բոլոր երեխաները:

Ս. Մարությանը և Ա. Դալլաքյանը անդրադառնալով մանկապարտեզ-ընտանիք կապին գրում է .«Մանկապարտեզ-ընտանիք համագործակցության ձևերից մեկը *ծնողական ժողովն է*: Կարևորն այն է, որ ժողովում մշտապես քննարկվեն ողջ խմբին, մանկապարտեզին և ընտանիքին միասնական պահանջներին վերաբերող հարցեր, երբեք չքննարկվի առանձին երեխայի անձը, այլ քննարկվեն միայն երևույթները, նրանց արարքները: Ընտանիքի, ծնողների հետ աշխատելիս դաստիարակները պետք է խուսափեն դատավորի դիրք ընդունելուց, յուաքանչյուր քայլ, վճիռ անհրաժեշտ է կատարել ծնողի հետ համաձայնեցնելով:

Ծնողների հետ հաղորդակցման բարելավումը միավորում է ծնողներին և դաստիարակներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն երեխայիի անձի ձևավորմանը: Մանկապարտեզի և ընտանիքի միջև երկկողմանի, կանոնավոր հաղորդակցումը երեխայի զարգացմանը նպաստող կարևոր գործոններից մեկն է:

Արդյունավետ հաղորդակցման համար անհրաժեշտ է, որ դաստիարակը և ծնողը միմյանց հետ տեղեկություններ փոխանակեն։

*Ծնողների հետ դասախոսություններ, սեմինարներ*

Շատ մանկապարտեզներում անցկացնում են սեմինարներ և իրականացնում են ծրագրեր ծնողների ընդգրկվածության հեշտացման համար և նրանց տեղեկացնում այն մասին, թե ինչ է տեղի ունենում խմբերում։ Ծնողին կոնկրետ տեղեկության հաղորդումը, թե ինչին պետք է ուշադրություն դարձնել երեխայի մեջ, հաղորդակցման տեսակետից առաջընթացի քայլ է։ { 1 ,119-120 }

*Ծնողների հետ հանդիպման պլանավորում.*

1. Ողջույն,
2. Ծանոթացման աշխուժացնող վարժություններ. «Գնացուցակ»,
3. Թեման՝ «Ընտանեկան կոնֆլիկտները և դրանց ազդեցությունը երեխայի վրա»,
4. Նպատակը՝ ծնողներին ներգրավել քննարկումների մեջ։ Ի՞նչ կցանկանան իմանալ ծնողները թեմայի մասին,
5. Ընթացքը՝ խթանող հարցադրումներ և մտքերի փոխանակություն,
6. Իմաստի ընկալում.

   «Ինչպիսի՞ն կլինի մեր երեխան» այս հարցը հաճախ է անհանգստացնում ծնողներին։ Թե ինչպիսին կլինի երեխան, կախված է դաստիարակությունից, ծնողներից, շրջապատող միջավայրից, այդ թվում նաև ընտանեկան մթնոլորտից և ծնողների փոխհարաբերություններից։

   Գրեթե չկան ընտանիքներ, որտեղ ծնողների միջև տարաձայնություններ չառաջանան։ Եթե ընտանիքում ծնողների հարաբերությունները լարված են լինում երեխայի մոտ առաջանում է վախի զգացում, դրա հետ մեկտեղ առաջ է գալիս ագրեսիվություն, նա դառնում է անվստահ, տխուր և մեկուսանում է։

Երեխան, որ մինչ այդ ուշադրության կենտրոնում էր, հայտվում է ուշադրությունից դուրս։

Ընտանիքում շատ հաճախ լուծվում է խաղաղ ճանապարհով։ Նման ընտանիքներում իշխում է փոխըմբռնումը, փոխզիջումն ու փոխվստահությունը։

7. Հարցեր ծնողներին.
    - Ինչպե՞ս են իրենց երեխանեն արձագանքում նման վեճերին։
    - Ի՞նչ կարելի է անել նման խնդիրներից խուսափելու համար։
    - Ի՞նչն է մեզ խանգարում այդ անել։
8. Կշռադատման փուլ – Պարապմունքի ամփոփում.

    Լարված ընտանեկան հարաբերությունները մեծ է երեխայի ոչ միայն մանկական տարիքի այլ հետագա կյանքի համար։

    Ուստի կարևոր է, որ երեխաները հեռու մնան ընտանեկան կոնֆլիկտներից։

## *Եզրակացություն*

Ուսումնասիրելով ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության առանձնահատկությունները, նրա մեթոդներն ու ձևերը եկանք այն եզրահանգման, որ երեխաների դաստիարակության և ուսուցման գործում մեծ դեր է խաղում ընտանիք և մանկապարտեզ արդյունավետ համագործակցությունը ,որը անհրաժեշտ պայման է վաղ տարիքի երեխաների սոցիալական զարգացման գործընթացի համար:

Ելնելով կատարված աշխատանքի արդյունքներից կարող ենք փաստել, որ դաստիարակի ձեռնարկած դաստիարակչական գործունեության արդյունավետությունը և որակը մեծապես կախված են համակարգված աշխատանքից: Իսկ համակարգված աշխատանքը դաստիարակի որակավորման բարձրացման և հարատև ինքնակրթության արդյունք է:

Իմ կարծիքով ընտանիքը և մանկապարտեզը հավասարապես ազդում են երեխայի դաստիարակության և զարգացման վրա:

Դաստիարակների գործունեության ձևը որոշվում է՝ ելնելով մանկապարտեզում և տվյալ խմբում ստեղծված մանկավարժական իրավիճակից, երեխաների զարգացման մակարդակից: Աշխատանքի ձևը սերտորեն կապված է մասնակիցների քանակի, ժամանակի, դաստիարակության վայրի և իրականացման կարգի հետ:

Փորձը ցույց է տալիս, որ կրթական գործունեությունը միշտ չէ, որ հասնում է ցանկալի նպատակին: Նման վիճակի պատճառներից մեկն էլ ընտանիք-մանկապարտեզ փոխհամագործակցության թերի լինելն է: Սրանից խուսափելու համար դաստիարակը պետք է ծավալի ինտերակտիվ դաստիարակչական գործունեություն, որում պետք է ներգրավվեն նաև ծնողները:

Կարծում եմ մանկապարտեզ և ընտանիք կապը պետք է հիմնվի փոխադարձ վստահության վրա, և դրա առկայության դեպքում շատ կարևոր է ստացված տեղեկությունների պահպանումը՝ գաղտնապահությունը։

Հետազոտական աշխատանքի ավարտին եկանք այն համոզման, որ ծնողները պետք է ակտիվորեն մասնակցեն մանկապարտեզի կյանքին։ Նրանց համար պետք է կազմակերպել քննարկումներ, խորհրդատվություններ, որոնք կնպաստեն ընտանիքում երեխայի դաստիարակությունը շարունակելու արդյունավետ ձևերի և միջոցների ճիշտ ընտրությանը։

Այսպիսով՝ երեխայի ուսուցման, դաստիարակության և զարգացման հարցի հաջող լուծման համար անհրաժեշտ է կրթական գործընթացի բոլոր մասնակիցների ակտիվ փոխգործակցությունը, միասնական մանկավարժական աշխատանքի տարբերակումը, ինտեգրումը և համակարգումը։ Այդ կապակցությամբ հանրակրթական հաստատությունների մանկավարժական խորհուրդը դաստիարակների գործառույթները որոշելիս պետք է առաջին հերթին հստակ նշի նրանց իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը՝ դրանք հարաբերելով կրթական գործընթացի մյուս մասնակիցների պաշտոնական պարտականությունների հետ։

*Օգտագործված գրականության ցանկ*


1. Դալլաքյան Ա. Մարության Ս., Նախադպրոցական մանկավարժություն, Երևան 2005, էջ 126:
2. Григорьева В. В., « Исторический очерк русской школы » (М.: Т-во тип. А. И. Мамонтова, 1900. с. 589 .
3. Жуков И. Н. Игра в труд в педагогике (на правах дискуссии). — Чита, 1921, с . 458.
4. Сластенин В. А. и др., Педагогика, Издательский центр "Академия", 2013. - с.576.